

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
25	Փետրվար	2019 թ.		Բ	7502547591
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
20	Փետրվար	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր		[5] Կնքման ամսաթիվ		[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀՂՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յրդ միկ. շրջ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԱԶԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ Ֆին. նախ. աշխ. գործառն. վարչ.		N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Ձեռք(%)	Այրժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-գերմաներեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	0.83	4475		3714.25
2	Ֆրանսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն և հակառակը	էջ	10.55	4475		47211.25
3	Ուկրաիներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	36.15	4550		164482.5
4	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	17.38	3475		60395.5
5	Հայերեն-չինարեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	3	13400		40200
6	Հայերեն-չինարեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	2	15200		30400
7	Հայերեն-չինարեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	3.15	15200		47880
8	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն և հակառակը	էջ	16.23	4475		72629.25
9	Հայերեն-վրացերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	26.68	2975		79373
10	Հայերեն-արաբերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	7.17	7450		53416.5
Ընդամենը						599702.25

Մասայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

STEPANYAN HMAYAK 2301850293

(ստորագրություն, անուն, ազգանուն)

25/02/2019 12:42:20

Մասայություն
(աշխատանք)
ստացող



(ստորագրություն, անուն, ազգանուն)

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ ճանաչելու մասին

28.12.2017թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Վ.Ալեյանս, քննարկելով վարույթիս թիվ 13204517 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

23.09.2016թ. ժակ Բաքարեջյանը «Ք զխավոր դատախազին դիմում է ներկայացրել կնոջ՝ Նաիրա Մկրտչյանի կողմից ապօրինի նպաստ ստանալու վերաբերյալ, այնուհետև 21.10.2016թ. «Ք ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել «Ք ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության աշխատակիցների կողմից ենթադրաբար կեղծիքներ կատարելու մասին:

Փաստի առթիվ 2017 թվականի նոյեմբերի 15-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում «Ք քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13204517 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:


Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության պետական եզրույթ հայերենն է, և քրեական դատավարությունն էլ տարվում է հայերեն լեզվով, իսկ գործով վկա **Ժակ Գրիգորի Բաքարեջյանը** չի տիրապետում հայերեն լեզվի գրավոր խոսքին, այլ տիրապետում է արաբերեն լեզվին, հետևաբար նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ: Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ք քր. դատ. օր. 15, 55, 83 հոդ.,

ՈՐՈՇԵՑԻ

1. Վարույթումս քննվող թիվ 13204517 քրեական գործով թարգմանիչ ճանաչել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից Մարալ Մարտիրոսի Զաքարյանին (ծնված 07.11.1982, հասցե՝ ք.Երևան, Կոմիտասի պողոտա, 12., 249բն., հեռախոս՝ 055-90-59-77):


2. Թարգմանիչ Մարալ Մարտիրոսի Զաքարյանին պարզաբանել «Ք քր. դատ. օր. 83 հոդ. նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել «Ք քր. օր. 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝

 Վ.Ալեյան

Որոշմանը ծանոթացա: Պարզաբանվել են «Ք քր. դատ. օր. 83 հոդ. նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար «Ք քր. օր. 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թաղականից հրավիրելու մասին

04 ք մայիսի, 2018թ.

ք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի երևանի քննչական վարչության ընկի Գ.Գալստյանս,
վերանայելով ապրույթարի վերաբերյալ նախապատրաստված թիվ 103 նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի ապրիլի 21-ին ժամը 11:40-ին «Աստղիկ» ԲԿ է դիմել Գևորգ Գեղամի Գասպարյանը և հայտնել որ գտնվել է «Հունդայի» մակերջի, 81 GP 008 հիմնավորմանը նախապատրաստված թիվ 103 նյութերում հարապատասխան հարցազրույցի վարչական տարածքում Թիբիլիսի-Երևան ավտոճանապարհով ընթանալից ինքնավարի են ենթարկվել, ինչի հետևանքով ստացել է մարմնական վնասվածքներ և տեղափոխվել է Կրասնայի հանրապետության բժշկական կենտրոն:

Գեղի առթիվ ՀՀ ռադիկալության ճՈ ծառայության ճՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի հրավանագման բաժանմունքում նախապատրաստված նյութերը 25.04.2018թ. առաջվել են ՀՀ ԲԿ Երևան քաղաքի քննչական վարչությունում, որտեղ նախապատրաստվել են թիվ 103 նյութերը:

Նկատի ունենալով որ սյուն նյութերի նախապատրաստման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել նյութերը ամբողջությամբ թարգմանել վրացերեն լեզվով, ուստի անհրաժեշտ է ներգրավել վրացերեն լեզվին տիրապետող թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն Քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Նեյի Թողյանին (լիազորագիր տրված «Վի-Գրուպ» ՍՊ ընկերության կողմից) և նրան պարզաբանել ՀՀ շրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա հրավորնքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն նախարերու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Որոշման նախն հայտնել Նեյի Թողյանին:

Որոշման հետ ծանոթացա, իմ հրավորնքները և պարտականություններն ինձ պարզաբանված են.

թարգմանիչ

04 ք մայիսի, 2018թ.

Թարգմանիչ



ԲԱՄԻՇ

Գ.Գալստյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

/Թարգմանիչ ներգրավելու մասին/

« 03 » ապրիլի 2018թ.

ք. Երևան

«Վ» քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Ս. Աղաբաբյանս, քննարկելով վարույթիս թիվ 69100805 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

«Վ» քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության վարույթում է գտնվում Ռուբեն Հակոբյանի վերաբերյալ թիվ 69100805 քրեական գործն, ում նկատմամբ որոշում է կայացվել «Վ» քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին 2-րդ և 3-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, հայտարարվել է հետախուզում և որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2018թ. փետրվարի 28-ին «Վ» քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում ստացվել է հետախուզվող, մեղադրյալ Ռուբեն Վասիլի Հակոբյանի՝ «Վ» ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի պետ Ա.Հ. Հովհաննիսյանին հասցեագրված, ֆրանսերեն լեզվով տպագիր դիմումը, որում Ռուբեն Վասիլի Հակոբյանի անվան դիմաց առկա է ստորագրություն, ամսաթիվ՝ 07-ը ապրիլի 2017թ., Ֆրանսիայի Հանրապետության նոտարի՝ «<Նոտար Սեդրիկ Հաշեմ 69700 Ջիվորսի, Դենֆեր Ռոշերո փողոց 23, հեռ.՝ 84 78 73 01 11>> (Cédric HACHEM, Notaire, 23 rue Denfert Rochereau 69700 GIVORS, tel: 04 78 73 01 11) գրառումներով կնիքի դրոշմվածք, նոտարի անվան դիմաց ստորագրություն:



Նշված դիմումով հետախուզվող, մեղադրյալ Ռուբեն Հակոբյանը խնդրել է իր վերաբերյալ հարուցված քրեական գործը կարճել՝ հանցանքի կատարման վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու համար քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել իրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ Ֆրանսիայի Հանրապետության տարածքում կատարել դատավարական գործողություններ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է հայերենից ֆրանսերեն թարգմանել հիշյալ հարցումը, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 69100805 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Ալինա Խաչատրյանին:

ՀԿԳ ավագ քննիչ  Գ. Ս. Աղաբաբյան


Որոշում
Թարգմանիչ հրավիրելու մասին

5-ր սեպտեմբերի, 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Աերապիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, առաջին դասի խորհրդական Ա.Հ. Գրիգորյան, վերանայելով թիվ 16185318 քրեական գործի նյութերը,

Պ ա ռ զ և ց ի

2018 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 21:40-ին, Երևան քաղաքի Իսակով փողոցի 19 հասցեում Էդգար Արթուրի Օհանյանը քաշել-տղկելու եղանակով՝ քայքայելով հափշտակել է Քախարչի Վանգի ձեռքին եղած պոլիէթիլենային տոպրակը, որի մեջ եղել է 3 տուփ «Մալորոտ» փեսակի ծխախոտ և մեկ հասր կրակադրիչ և դիմել փախուստի՝ վերջինիս պատճառելով 19.100 ՀՀ դրամի գույքային վնաս:

Քննչի առթիվ 2018 թվականի հունիսի 13-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16185318 քրեական գործը, որն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ ԲԿ ԵՔԲԿ Մալաթիա-Աերապիա վարչական շրջանի քննչական բաժնի կազմարվում է նախաքննություն:


Նախաքննությանը պարզվել է, որ Վան Սիեն Յինը չի տիրապետում հայերեն քանակոր և գրավոր լեզվին, ուստի վերջինիս մասնակցությամբ քննչական գործողություններ կատարելու նպատակով քրեական գործով անհրաժեշտ է որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուս» ՍՊ ընկերության կողմից չինեթնից հայերեն և հակառակը թարգմանչական ծառայություններ իրականացնելու լիազորությամբ օժրված թարգմանիչ Ինեսա Ալավերդյանին:


Ենելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ, 83-րդ հոդվածների պահանջներով


Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 16185318 քրեական գործով Ինեսա Ռոբերտի Ալավերդյանին հրավիրել որպես թարգմանիչ և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները:

Քննիչ, առաջին դասի խորհրդական՝

 Ա.Հ. Գրիգորյան





Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

ք. Երևան

12 մայիսի 2018թ.

«Հ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի «ԿԳ քննիչ, առաջին դասի խորհրդական Ա.Բ.Երիցյան» վերանայելով թիվ 16174718 քրեական գործի նյութերը:

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի մարտի 30-ին՝ ժամը 18:30-ից մինչև մարտի 31-ը ժամը 08:00-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձն, ապօրինի մուտք է գործել Երևան քաղաքի Իսակովի պողոտայի 19 հասցեում կառուցվող Չինաստանի դեսպանատան շինարարության տարածք և այնտեղից գաղտնի հափշտակել է թվով հինգ տեսակի և տարբեր երկրորդամբ էլեկտրական մալուխներ՝ Չինաստանի դեսպանատանը պատճառելով 1,000,000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Ղեկքի առթիվ 14.04.2018թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 16174718 քրեական գործն, որը 20.04.2018թ. ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի և որի նախաքննությունը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում Չինաստանի դեսպանատունը ճանաչվել է տուժող, իսկ Չենգյանգ Վանը՝ տուժողի ներկայացուցիչ:

Նախաքննությամբ պարզվել է նաև, որ Չենգյանգ Վանը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, սակայն տիրապետում է չիներեն գրավոր և բանավոր լեզվին:

Հաշվի առնելով, որ Չենգյանգ Վանը չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ գրավոր հայերենին և ազատորեն տիրապետում է չիներեն լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի


1. Թիվ 16174718 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Գայանե Սերգեյի Մալիշենկոին /ծնված 12.11.1989թ., բնակվող՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 35 շենքի 33 բնակարան հասցեում, աշխատում է «Վի Գրուպ» ՍՊԸ-ում որպես թարգմանիչ/ ազատորեն տիրապետում է հայերեն և չիներեն լեզուներին, վերջինս գործով չչահագրգռված անձ է:
2. Թարգմանիչ Գ.Մալիշենկոին պարգևատրել նրա պարտականություններն ու իրավունքներն և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ

քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ:

ՀԿԳ քննիչ  Ա.Ք.Երիցյան

Թարգմանիչ Գ.Մալիշենկո

Սույն որոշումը ինձ հայտնվել է 12 մայիսի 2018թ: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով և 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի պարտականությունները և իրավունքները:

Թարգմանիչ  Գ.Մալիշենկո

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց:

ՀԿԳ քննիչ  Ա.Ք.Երիցյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ճանաչելու մասին մասին

08 մայիսի 2018թ.

ք. Մեղրի

«Քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մինաս Մինասյան, վերանայելով վարույթիս թիվ 45153817 քրեական գործի նյութերը

պ ա թ զ Ե ց ի՝

2017 թվականի սեպտեմբերի 1-ին ԻԻՀ քաղաքացի Ռեզա Սալեհզադեից Մեղրիի մարտակետում Երևան քաղաքի բնակիչ Վիտայի Ազատի Հովհաննիսյանից խտրողախոսությամբ հալիչտակել է առանձնապես խոշոր չափերով 4784500 ՀՀ դրամին համարժեք 10000 ԱՄՆ դոլլար արժողությամբ 7 պոմերանյան շափց, 1 յորկչիդյան տերյեր և 2 պուդել ցեղատեսակի շներ:

Դեպքի առթիվ 2017թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ոստիկանության Մեղրիի բաժնում հարուցվել է թիվ 45153817 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Սյունիքի մարզային քննչական վարչություն:

2017 թվականի դեկտեմբերի 22-ին որոշում է կայացվել Ռեզա Սալեհզադեիին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասին 1-ին կետով՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմնին ուղարկվող իրավական օգնության ցուցաբերելու հարցումը և կից փաստաթղթերը հայերենից թարգմանել պարսկերեն լեզվով:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով,

ո Ր Ո Շ Ե Գ ի՝

1.Թիվ 45153817 քրեական գործով թարգմանիչ ճանաչել «Վի գրուպ». ՍՊ ընկերության թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին :

2.Թարգմանիչին բացատրել իր պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ:

ավագ քննիչ՝

 Մ. Մինասյան



ՈՐՈՇՈՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«07» մարտի 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ՝ Ն.Գ.Համբարձումյանս, վերանայելով վարույթիս թիվ 58218017 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2016 թվականի նոյեմբերի 16-ին Ոսկրահնայի քաղաքացի Ալեքսանդր Լեզկին (նույն ինքը Ալեքսանդր Ռուբանը) հիմնադրել է «Բուքինգթերվ» ՍՊ ընկերությունը՝ իբր հյուրանոցային ծառայություններ մատուցելու նպատակով : Իր դիմումի համաձայն՝ Երևան քաղաքի Շահումյան 36 հասցեում գտնվող «Շելֆորտ» առևտրային կետում տեղադրել է «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության ՊՈՍ տերմինալ, որի միջոցով 2017 թվականի մարտի 10-ին թիվ 4714870008252343 և թիվ 5272697115024245 բանկային պլաստիկ քարտերով կատարվել են ընդհանուր 14.207.000 ՀՀ դրամի չափով թվով 5 գործարքներ և վաճառքի կետի միջոցով կատարվել է «գործարքի գումարի վերադարձ հաճախորդին» գործողություն : 2017 թվականի ապրիլի 14-ին նշված գործարքներով փոխանցված գումարներից 7.800.000 ՀՀ դրամը փոխանցվել է «Դոմաշգրուպլիմիթեդ» ՍՊ ընկերության հաշվեհամարին, որի հիմնադիրն է հանդիսանում Բելառուսի Հանրապետության քաղաքացի Վլադիմիր Դոմաշը (նույն ինքը Անդրիյ Սերբը) : Գործարքները կասկածելի լինելու պատճառով՝ Բանկի աշխատակիցն այցելել է ընկերության գործունեության ծավալման հասցե և պարզել, որ նշված վայրում ընկերությունը չի գործում :

Արդյունքում սպասարկման կետի հաշվին հասանելի միջոցների բացակայության պայմաններում ձևավորված 14.207.000 ՀՀ դրամի չափով Բանկի նկատմամբ դեբիտորական պարտքի գումարը համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակվել է : Հափշտակվել է նաև Բանկի կողմից ընկերությանը տրամադրված ՊՈՍ տերմինալը :

Այդ դեպքի առթիվ 2017 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58218017 քրեական գործը :

2017 թվականի դեկտեմբերի 11-ին թիվ 58218017 քրեական գործը նախաքննությունը շարունակելու համար ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն :

Նախաքննության ընթացքում «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունը ճանաչվել է տուժող, հարցաքննվել են Ալեքսանդր Լեզկին (նույն ինքը Ոսկրահնայի քաղաքացի Ալեքսանդր Ռուբանի) և Վլադիմիր Դոմաշի (նույն ինքը Ոսկրահնայի քաղաքացի Անդրիյ Սերբի) հետ առնչություն ունեցած Բանկի աշխատակիցները : Հանցագործության կատարման անմիջական առնչություն ունեցող անձանց ինքնությունը պարզելու նպատակով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումներ են ուղարկվել Ոսկրահնայի և Բելառուսի Հանրապետության իրավասու մարմիններին ու ՀՀ ոստիկանությունում Ինտերպոլի ԱԿԲ-ին :


Քրեական գործի հետագա նախաքննությանը ՀՀ ոստիկանությունում Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացվել են նյութեր ուկրաիններեն լեզվով:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել ստացված ուկրաիններեն լեզվով նյութերը թարգմանել հայերեն լեզվով, իսկ «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Լուսինե Մարգարյանը ազատ տիրապետում է հայերեն և ուկրաիններեն լեզուներին, շահագրգռված չէ գործի էլքով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով.


ՈՐՈՇԵՑԻ

Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Լուսինե Մարգարյանին /ՆՔ 001805944, /, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝



Ն.Գ.Համբարձույան

Որոշման հետք ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են Թարգմանիչ՝  Լ.Մարգարյան

« » մարտի 2018թ.

<<28>> մարտի 2018 թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Լ.Ա.Կարապետյանս, քննարկելով վարույթիս թիվ 13109016 քրեական գործերի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

29.01.2016թ. ժամը 13:00-ից մինչև 14:00-ն ընկած ժամանակահատվածում անհայտ երեք անձինք տեխնիկական միջոցների գործադրմամբ կոտրել են Երևան քաղաքի Ֆրիկի 2 շենք 8 բնակարանի մուտքի դռան փականը և ապօրինի մուտք գործել նշված բնակարան, հափշտակել են այնտեղ եղած 266395 «Ղրամֆին համարժեք 500 Եվրո, 488750 «Ղրամֆին համարժեք 1000 ԱՄՆ դոլար գումարները և «Այֆոն 6» բջջային հեռախոսը, սակայն հանդիպելով տուն վերադարձած Վազգեն Սարիբեկի Ջաղոյանին՝ բացահայտ հափշտակել է վերջինիս վերոհիշյալ խոշոր չափի գույքը, դիմել են փախուստի:

Դեպքի առթիվ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում «Քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 13109016 քրեական գործը, կատարվել է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում կատարված վիճակում ստացվել է ուղարկված քննչական պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Թիվ 13109016 քրեական գործով հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից, թարգմանիչ՝ Սաթենիկ Հայթյանին, ով տիրապետում է հայերեն, գերմաներեն գրավոր և բանավոր լեզուներին:

Թարգմանչին բացատրել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ

Լ.Ա.Կարապետյան

Ինձ բացատրված է որպես թարգմանիչ իմ իրավունքներն ու պարտականություններ: Միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ

Ս.Հայթյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգման ճանաչելու մասին

31. 05. 2017թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Գ.Հ.Ավագյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 15139416 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

2016 թվականի օգոստոսի 02-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնից ստացվել են Հայկանուշ Հարությունյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերը, որոնց համաձայն 2016 թվականի հուլիսի 22-ին ՀՀ ոստիկանության Արարատի բաժնից ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի է ստացվել Արթուր Արսյունի Ծատուրյանի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետին հասցեագրված դիմումն, այն մասին, որ Հայկանուշ Հարությունյանը 2011 թվականի հուլիսի 01-ից մինչև 2014 թվականի հոկտեմբերի 01-ը ստացել է Վալյա Սիմոնի Սարգսյանի խոշոր չափի՝ 1.412.260 ՀՀ դրամ կենսաթոշակը:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 15139416 քրեական գործը և կատարվել է նախաքննություն:

26.05.2017թ. սույն քրեական գործով միջազգային իրավական օգնություն ցույց տալու մասին հարցում է ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնին՝ Ֆրանսիայի Հանրապետության իրավասու մարմին ուղարկելու միջնորդությամբ:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ վերը նշված հարցումն ու դրան կից նյութերը ենթակա են թարգմանության ֆրանսերեն լեզվով, ուստի անհրաժեշտ է վերը նշված փաստաթղթերի թարգմանության համար ներգրավել թարգման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով թարգմանիչ ճանաչել «Վի Գրուպ» ՍՊԸ թարգմանիչ Ալինա Վարդանի Խաչատրյանին:
2. Ա.Խաչատրյանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու

պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:


Ավագ քննիչ՝



Գ. Ա. Ավագյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա. Վ. Խաչատրյան